Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (Գնաճի հաշվետվություն, 2008թ. 2-րդ եռամսյակ)

2008-08-15

(2008/2) Հարգելի ընթերցող

2008 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 17-րդ հոդվածների փոփոխված դրույթները, որոնց համաձայն՝ փոխվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևաչափերը և կառուցվածքը: Նախկինում ներկայացվող «ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը» ներառում էր գնաճի և ֆինանսական կայունության մասին հաշվետվությունները, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը և կառավարման հաշվետվությունը, ինչպես նաև վիճակագրական հավելված: Օրենքի նոր պահանջների համաձայն՝ այսուհետ գնաճի եռամսյակային հաշվետվությունները կհրապարակվեն որպես առանձին փաստաթուղթ՝դրամավարկային եռամսյակային ծրագրերի հետ մեկտեղ ներառվելով մեկ պարբերականում, որը տարեկան երկու անգամ՝ 1-ին և 3-րդ եռամսյակներին հաջորդող երկու ամսվա ընթացքում ներկայացվելու է Ազգային ժողով: Բացի այդ, տարեկան պարբերականությամբ հրատարակվելու են «Ֆինանսական կայունության հաշվետվությունը» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիրը» :

Սույն պարբերականը ներկայացնում է 2008 թ. 2-րդ եռամսյակի ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը և գնաճի հաշվետվությունը: 2008 թվականի 2-րդ եռամսյակի (ապրիլ, մայիս, հունիս) դրամավարկային քաղաքականության ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

> *2008 թվականի առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշներ». ներկայացվում են գնաճի, արտաքին հատվածի, համախառն առաջարկի ու պահանջարկի, ինչպես նաև դրամավարկային հատվածի փաստացի զարգացումները,*
>
> *«2008 թվականի երկրորդից չորրորդ եռամսյակների ճշգրտված և 2009 թվականի առաջին եռամսյակի կանխատեսումները». ԿԲ կանխատեսումներն են արտաքին հատվածի, համախառն առաջարկի և պահանջարկի, աշխատուժի*

շուկայի և դրամավարկային զարգացումների վերաբերյալ,

«Գնաճի կանխատեսումներ» . տնտեսության առանձին հատվածներում ակնկալվող զարգացումներից ելնելով՝ տրվում է առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի գնաճի կանխատեսումը,

«Դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում» . ներկայացվում է գնաճի վրա արտաքին և ներքին միջավայրի ազդեցության, առկա գնաճային ռիսկերի և դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունների վերաբերյալ ՀՀ ԿԲ գնահատականը:

2008 թվականի 2-րդ եռամսյակի գնաճի հաշվետվությունը ներառում է հետևյալ հիմնական բաժինները.

Համառոտագիր. ամփոփ ներկայացվում են 2008թ. 2-րդ եռամսյակում գնաճի միտումները, ԿԲ դրամավարկային քաղաքականության ընթացքը և ձևավորված մակրոտնտեսական միջավայրը.

Գնաճի զարգացումներ. մանրամասն դիտարկվում են գնաճի փաստացի ցուցանիշները՝ ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճի վարքագիծը և գնաճի նպատակային ցուցանիշի ապահովման ընթացքը.

Գնաճի գործոններ, որի շրջանակներում վերլուծվում են.

Արտաքին միջավայրը

Վճարային հաշվեկշիռը

Տոկոսադրույքները, փոխարժեքը և դրամավարկային զարգացումները

Համախառն պահանջարկը և առաջարկը

Աշխատանքի շուկան

Ներմուծման և արտադրողների գները

Գնաճի սպասումները

Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (Գնաճի հաշվետվություն, 2008թ. 2-րդ եռամսյակ)